Կուպաշտական ամէն սովորութիւններ այնքան արմատացած էին, որ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ հաստատուելն վերջը ստիպուեցաւ զանոնք նոյնացնել աւելի բարձր կրօնքի մը տուեալներուն հետ, որպէս զի հոգեւոր տուեալներու պատճառ ըլլայ.

Մ. Զերազի լ'Օալենտ Ինeditէ քաղելով թրզմ.նեց,
ՄԻՃՐԱՆ. ՅՈՎ. ՃԱՆ. ՆԷՍԽՈՆ

— 65 —

5



Տ. ՍԵՓԱՆՈՒ ԱՐՔԵՊԻՍԿ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
(1879ԻՆ)

37 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ ՄԷջ

ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՒ Ա. ԱՐՔԵՊՈ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՆԻԿՈՄԻԴԻՈՑ

Հովիւ բաշ զանձն իւր դեէ ի վերայ ոչխարաց

Տարիներ են որ անցեր են, և թերեւս օրեր՝ որ
գեռ կը մնան, եւ ի՞նչ է արդէն այս կեանքը՝ որուն
ետեւէն կը վազենք, և հասնիլ կ'ուզենք և չենք
համեր, Ոչ ուրիշ բան՝ բայց եթէ ճամբայ մը, ու
որուն վայ մարդկութիւնը կը քալէ անվերջ անդա-
դար, Եւ հիւէներու նման կ'անհետի անսպառ հատ-
նումավ ու մաշումով,

* *

1879ին ամրան մէջ էր որ օր մը ներսէս Վարժա
պետեան կը կանչէր զիս, և ցոյց տալով Պատրիար-
քարանի իր սենեակին մէջ երկու կարգերու վոյս
շարուած թիկնաբոռներէն միոյն վայ նստած եկե-
ղեցական մը, կը յանձնարարէր գեր մը գտել Ռու-
սիա Դեսպան Պ. Նովիգովի, որպէս զի հաճի հրաման
տալ ընդհ. Հիւպատասարանին, վաւերացնելու անոր

անցագիրը կամիածին ուղեւորելու և եպիսկոպոսական աստիճան ստանալու համար,

Այս գործողութիւնը անհաժեշտ էր, զան զի Ուուս Կառավարութիւնը արգիլած էր, և թուլ չէ ապա որ օտարահամատակ եկեղեցականներ մուտքործեն Ուուսիա, և Հայոց համար՝ առանց Վեհ. Կաթողիկոսին հաճութեան ու հաւանութեան.

Եւ վարդապետը կը հետեւէր ինձ գրասենեակո՞գիրը գրելու համար. Պարթև հասակով, սեւ մազերով, սեւ մօրութով եկեղեցական մըն էր ան, և այդ օրն էր որ ճանչցայ Տ. Ստեփանոս Ծ. Վեդ. Յավակիմեանը, նուպարհանազարեանի Անդրանիկ Ժառանգաւորակ ներսութիւն Ներսէսի Ճեռնասուն Ներսէսի Նիս կոմիդիոյ Առաջնորդութեան օրի փօխանքդէն, և ապա վիճակին Առաջնորդն՝ որ պիտի ուղեւորեր կամիածին.

Այս հանդիպումն ու ծանօթութիւնը շատ հաճելի եղաւ ինձ, և կարծեմ, Տ. Ստեփանոս Վարդապետին համար ալ, և մեր յարաբերութիւնները հետզետէ շատ մտերմական եղան. կամիածինէ վերադարձին Արարատէն քարի կտոր մը բերաւ ինձ նույնը, ինչպէս խնդրած էի, և քարի կտորը մինչև վերջը աչքիս առ ջև մասց գրասեղանիս վրայ՝ ինծի համար երբեւ չժնադ զարդ մը, եւ յիշառակը Տ. Ստեփանոս Մրազանին, թէեւ որ չէր ըլլար ո՞ւ չստիպուէի անոր համար բացարութիւն տալու այցելուներու, մինչեւ որ ինծի հետ ամենուն աչքն ալ վորժուեցաւ անոր.

Տ. Ստեփանոս Մրազան շատ չէր երեւար Պոլսոյ մէջ, հազիւ մէկ երկու տարին անգամ մը. եւ այն ալ երբ վիճակին վերաբերեալ յարաբերական կարեւոր ինդիբներ ունենար կամ պատահէին, ինչպէս 1881—82ի Եալաք տերե-Զալկարայի սօզի օրերն, եւ տեղն է շնորհակալութեամբ յիշելու որ Հայոց Պատրիարքին մէկ գորս վրայ՝ Պ. Թօրժ Զարիփի 500 մթա ոչ թէ կը զեկէր, այլ ինք անձամբ Պատրիարքան կը բերէր ու կը յանձնէր Մրազանին ի նըպատ սովելոց, Խումելին Պօշնաք գաղթականներու հայաբնակ գիւղերուն մէջ կամ մօտերը տեղափոխութիւնն կամ բնակակացութիւնն, եւ կամաց կամաց անոնց հողային յափշտակութիւններն՝ պաշտպանուած Սուլթան Համիտի օրով Եըլտըզի պօշնաք սիրակշորներէն, ինչպէս որ մինչեւ ցարդ գրաւուած կը մասը Պալեան Կարապետ Ամիրայի կողմէ Երթևադէմի նուիրուած Եալօվայի Ագարակի Հողերուն մէկ կարեւոր մասը. իսկ մասնակի ինդիրները ինք կը կարգադրէր, կը վերջացնէր տեղւոյն վրայ, այնպէս որ իր նամակներու թուահամարը եթէ 1914ին 70000ը կ'անցնէր, ինչպէս կ'երեւէին իր գրերուն գլուխը տըրուած թուանշաններէն յիսուն տարուան շրջանի մը մէջ հազիւ թէ հազար մը կարելի է գտնել Պատրիարքարանի առշիններուն մէջ. Տ. Ստեփանոս Մրազան անձայն անշատկ գործող մը եղած է, միշտ

այցելութեան մէջ իր թեմերը, տեղ մը դպրոց մը շինած է, տեղ մը եկեղեցի, տեղ մը բաղնիք, տեղ մը ազգիւր, հնձպէս որ տեղայն պայմաններն ու իր հօտին անդորրութիւնը կը պահանջեն. Բայց, ափսո՞ս, որ 1915ի անցքերն ժողովրդեան մեծագոյն մասին հետ այս շնուրթիւններն ալ փճացուցած ու քարու քանդ ըրած են, իսկ իր անձնութիւնը հանդէմ իր հօտին՝ իր հոգեւոր ծնողին նման, վեր է այէն գովեստէ, քանի որ ամէնուն ալ յատնի է թէ երբ վիճակայիններն՝ իրը 70,000 Հայեր. Կը տարագուէին, գէալ է Տէր-Զօր, Տ. Ստեփանոս Պորազան. իբրև նոր Մովսէս մը, ցուռը ձեռքը, վերաբեր կոնակը, հետեւած է անոք, եւ չէ բաժնուած իր հօտին քովէն, հակառակ անոք որ Աւստրի Հաւնգարիո, Դեսպան Մարգրի Բալլավիչինի դիմումին զրա տեղական թուրք իշխանութիւններն արտօնած են որ ինք վերադառնայ իր տեղը. Բայց Տ. Ստեփանոս Եպո. պատասխանած է որ իր ժողովուրդն ուր որ ըլլայ, իմն ալ հոն է, եւ մերժած է իրեն համար եղած մասնաւոր թելլուռութիւնը, եւ այսպէս մինչեւ ցայսօր Արաբիայէն մինչեւ Թրակիա անբաժան կը հետեւի իր հօտին, ուր որ սեւ ճակատագիրն առաջնորդէ զայն.

Տ. Ստեփանոս Սըբազան կէս դարէ աւելի Հայ եկեղեցականի կեանք. մը ունի, որ՝ մեր երանաշնորհ նախնեաց նման, միտքարձրպահած է անոր փառքն

ու պատիւը, եւ հաւատարիմ իր ուխտին՝ անբաժան մնալով իրեն պահկուած նիկոմիդիոյ վիճակէն.

Պատրիարքարանի արձանագրութիւններն ալ ցոյց կուտան որ ժամանակակից վիճակաւոր առաջնորդներուն մէջ անոր հարազատ մէկ տիպարն եղած է նաեւ Սեբաստիոյ Առաջնորդ. Տ. Դեմքրոս Ո. Արքեպո. Թահմիղձեան՝ որ արեղայութենէն մինչեւ Արքեպիսկոպոսութիւն եւ ցմահ անբաժան մնացած է իր վիճակէն, եւ արժանապէս հովուած իր հօտը, դիմագրուելով ժամանակակից արհուակիցներու եւ վըտանգներու 1894—96ի կատորածի օրերուն, եւ անկէ վերջ միակը 800 է աւելի որբեր ամփոփած ու խնամարկած է Ս. Նշանի վանքին մէջ.

Սակայն, ափսո՞ս, եւ հազար ափսոս, որ Ազգին արդէ ճգնաժամի օրերուն հունձի բազումի են, եւ մշակի սակաւի:

Գ. ՀԱՅԵԱՆ
27 Յունիս 1922 Գլուալը

* *

Կ'արժէ յիշատակել այս առթիւ թէ Տ. Ստեփանոս Սըբազան տարւոյս ամրան տօթագին օրերուն իրը երկու ամիսներ իր հօտին բարելաւութեան նըպաստելու եւ անդով Պուրյ մէջ ամէն բարձր շրջանակներու դիմումներ կատարեց և յաջողեցաւ կարեւոր նպաստ ապահովել Թրակիո գտնաւոր իր ժողովրդեան. Բայց, աւազ ո, որ այժմ նայն տեղէն ալ տեղահան կ'ըլլայ կըկին թիւթանական դժբախտ ժողովութն:


Ս. Գ.

ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

Միլան՝ հիւսիսային հտալիոյ ամէնէն հարուստ ու բազմամարդ քաղաքն է, որ իր մէջ կը կերպոնացնէ ճարտարարուենոտի բարոր ձիւզերը. հարթ մակերեւ- ւոյթի մը վրայ հաստատուած սոյն քաղաքը շատ գե- ղեցիկ տեսք մը ունի, ծառուղիներ, Ընդարձակ փառքեր, ճեմավայրեր, լայնանիստ ուղիներ, հասա- թակաց պարտէզներ՝ իտալացի մեծ մարդոց մեծադիօք արձաններովը զարդարուած ու անուանուած. շեն- քեր հոյակալ, մէկզմէկէ փառայեղ, ճարտարապե- տական հրաշալիքներ, որոնք քաղաքին ամէն կողմը կը զարդարեն վայելչօրէն.

Միայն այսչափով չէ որ անուանի եղած է Միլան. ունի դարաւոր համալսարաններ, շքեղ թատրոններ, հինաւուրց եկեղեցիներ, թանգարաններ և մանա- ւանդ. մատենադարաններ զորոնք յիշտակել բաւա- կան է, պէտք է երթալ այցելել ու տեսնել իրենց մէջ գտնուած գլուխ-գործոցները,

Այս՝ պէտք է երթալ տեսնելու համար Սանրա Մարիա տեղի Կրացիկ եկեղեցւոյն մէջ լէռարոտ տա վինչիի՝ հտալիոյ մեծահանձար մէկ զաւկին՝ նկարիչ արձանագործ, ճարտարապետ, ճարտարագէտ, բա- նաստեղծ, գրագէտ ու երաժիշտ, որ իր մէջ կ'ամ-




փոփէ գեղարուեստի բօլոր ճիշդերը, որոնք կը ցու-
լանան իր հանձարէն, արեւուն բոցանշոյլ ճառա-
գայթներուն պէս, հոն այդ հինաւուրց շենքին մէջ
պատին վրայ թէկսի նկարած է ընթեաց մեծ նկարը,
եւ ինքն է հեղինակը ծօգնա յաւիտենապէս ան-
մահ նկարին, որուն դէմքին վրայ միշտ կը փայլի
կենդանի ժպիտը.

Ուրիշ շենքի մը՝ Պրէրասի հին ու մթնշաղ պա-
լատին նկարներու օրահը կը զարդարեն Բաֆայէլի
Աստվածութիւնը, Լէօնարտո առ Վինչիի Քրիստուր, եւ
իր աշակերտներէն միոյն Լուիսիի Սուրբ Կատարինէի
քաղումը՝ Հրեշտակներու ձեռօք. եւ մասնաւանդ Պէլ-
լինիի հտամիս ուրիշ մէկ հանձարին աննման մէկ ար-
տադրութիւնը՝ Քրիստոսի մարմինը Մայր Աստուածած-
նայ գիրկը հրաշալիօրէն հրաշալի նկարը, որուն առաջ
մարդ ընդ երկար յափշտակուած կը մնայ, կը դիտէ
ակնապիշ լուր ու անմոռւնչ զմայլանքէ զմայլանք
կը թեւածի, կը վերանայ ու ակամայ կը հեռանայ
միշտ աչքերը հոն սեւեռած.

Նոյն պալատի մասնաւոր օրահներու դարաննե-
րուն մէջ պահուած կան մեծ խնամքով ու հօգածու-
թեամբ Կալիէօ Կալիէի իտալացի աստղաբաշխին
Թղրակցութիւնը լատիներէն Աստուածաշունչ մը 1463ին
պառած տպագրութեան դիտէն 36 առօի վերջը.

Բայց մի՛ զարանիր շարսնակելու քառ այցելու-
թիւննորդ Միլանի հոյաշէն քաղաքին զանազան ուղը.




Գրերայի մէջ—Բաֆայէլի «Աստվածութիւն» նկարը

բավայթերը՝ ուր պահուած կան այնչափ անգին գալի-
շեր, ու քիչ մըն ալ յառաջացիր ու ինքինքող կը



Պրերայի մէջ Պելինիի
«Քրիստոսի Մարմինը Մայր Աստուածածնայ
զիւկը»

գտնես Ամբողջութեան մատենադարանին առաջ, որուն
սրաներէն միւսն մէջ կոյ պահուած լէօնարտո տա-
վինչին գրական երկոց հաւաքածոյին միակ օրինակը,



Բնապատմական Մուղէոն

Հօն են նաև Վիթքիւայ Մարտվնի, Տիտոս Լիվիոսի
ծարեցրց մագաղաթեայ ձեռագիր օրինակները, իսկ
նկարուց սրահին մէջ կը տեսնուի իտալացի մեծագոյն
վարպետին՝ Ռաֆայէլի Արկենի դպրոցի հոչակառը
նկարը, որ կը ներկայացնէ հոյն Հելլադայի ամբողջ
հանձարները, որոնք իրենց կարգին ի հանդէս եկած
են գեղակերտ բեմի մը վրայ. Այս միեւնույն մատե-
նադարանին ուրոյն դարաններուն մէջ շարուած են
Հոմերի իլիականին՝ հատակոտոր յունարէն բնագիրը,
Տանթէի՝ Երկնային հատակերպութեան մի օբինակը. Պը-
զատոնի ու Իկեկերոնի ձեռագիրները.

Բայց պէտք չէ մոռնալ այցելելու նաև Բնապատ-
մական շեղող թանգարանին հոյակապ շնչքը, որուն
շինուածքն իսկ ճարտարապետական ու գեղարուես-
տական մեծագործութիւն մըն է համակ մարմարիսնէ
կառուցուած, ուր պահուած կան գիտութեան ան-
գին ու անրաւ գանձեր, ամէնքն ալ ապակեսյ դա-
րաններուն մէջ շար ի շար, դարերու կարգաւ. Հօն է
որ կը տեսնուս բրածոյ ու անդքջրհնեղներան կենդան-
եաց ոսկերոտին, կամ անոնց հետքերը քարերու
վրայ դրոշմուած, թուզուններու, սուզուններու, ճճի-
ներու և միջատներու անթիւ ու անհամար տեսակ-
բողներուն ոսկորները,

Ու կը հեռանաս քու երկարատեւ այցելութիւն-
ներէդ մտածելով միշտ քաշաքակէրթ աղգի մը մեծ-
ութեան վրայ.

1922 Սեպ. Օրթագիւղ

Ա. Պարեւճեսս

Մատինի կ. Պատուան Ե. Խաչատրյան

ՀԱՆԵԼՈՒԿ

(Ա. Ն. ՑԻՊ)

ԱՆՄԱՀ ՔԵՐԹՈՂԻ

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ



Անձըս է նիմար, հասակըս երկար
Սուր ոտք միակ, աչք մ'ունիմ ծակ.
Եւ երը բուսնի զլուխըս մազ մի,
ի մէջ երկու զատ բաներու
Անցնիմ զառնամ իրար կապես
Եւ ես ճոն չեմ.

Սոյն հանելուկը Ցարեցոյցիս նուիրած է բանա-
սէր ուսուցիչ Տիար Պռաքել Պիպէռմեան, որ յա-
ջողած է գտնել զայն անմահ թերթողին ուսումնասի-
րութեան համար իր պրատումներուն ատեն հայ-Հռով-
մէական տիկնոց մը քովին. Դժբախտաբար իր Յու-
շարմանը հրատարակած ատեն չէ ունեցած զայն.

Հանելուկս մինչեւ 1 մարտ 1923 լուծողներու ա-
նունները պիտի հրատարակուին յառաջիկայ (1924)
Ցարեցոյցիս մէջ, Առաջին անգամ լուծողը պարզեւ
պիտի ստանայ լաւագոյն հատոր մը Գարամանեան
Գրատան կողմէ, Կ. Պոլիս, Զարմաքմրլար թիւ 50:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՄՆԵՐ

Ամէն կլոխէ մէյմէկ թել մազ
Առնուս նէ՝ միւրուք կ'ըլլայ,
Արաղաղը կատարովը կը պարծի,
Խեւն ալ իր մեծ բիթովը.

Երես մ'ունի որ, հագուսի երուսալէմ երթաս չի
մաշիր,

Եօթը եկեղեցի շինելուդ, եօթը որք մարդ արա,
Թէ՝ հոգաս՝ բուրաստան, թէ չհոգաս՝ մացառըս-
տան,

Ինչուան առուն ջուր գայ, գորտին աչուին դուրս
կուզայ,

Իշուն հարցուցեր են, ի՞նչ պաշտօն կ'ուզես. ա-
սաց. ձմեռն ըլլիմ կատու, ամառը հովուի շուն.

Լան լսն թեւեր ուժ չկայ, խոշոր աչուի լու
չկայ,

Լաւ է խողանալ քան թէ խոստանալ եւ չկա-
տարել,

Ծփս ծաղկիս, վարդ բոլորիս.

Կտրիմը ծիէն իյնայ, վազէ նորէն կը հեծնայ,

Հարուստը օժ է կերեր, ըսեր են՝ զեղ է, աղ-
քատը կերեր է, ըսեր են՝ քաղցած է,

Զկան հարցուցեր են. ծովէն ի՞նչ խապար.—
ըսեր է. ըսելիր շատ ունիմ, բերանս ջրով լիբն է.

Մէջը բորբս, գուրաը Փիլիպպոս,

Մէկ ծաղկէն օժը թոյն կը շինէ, մեղուն՝ մեղը,

Մարիկը է տաքուկ հացիկ,

Ով ուտէ, կուկշտացնէ.

Հարիկն է անպակ զինի,

Ով խմէ, կու արբեցնէ.

Աղբարն արեզակ նման

Սարն ու մօր հաւսար կը ցաթէ,

ՀՆՈՒԹԻՒՆՔ ԱԿԱԱՑ
ՃԱՆԻԿԻԱՆԻ

ՆԷՅՔՍԲԻՐԵԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Պատանութեան վաղ առաւօտին, շինջ ցողի պա-
հուն վարակիչ հովերն շատ աւելի երկիւղալի են,

Ընտրած եւ փորձած բարեկամներդ պողպատ օ-
զերով պրկէ հոգույդ հետ.

Զգուշացիր կուէ, բայց երբ մտար մէջը, այն-
պէս տար գործը, որ զգուշանայ ոսոխդ քինէ,

Ճշմարտութեան ծուկը կը բռնէ սուտի խայծը.

ՄՆՐԻԴՆԵՐՈՒ ՀԱՄԵՐԳԸ

1921 թուի Մայիսի 17ի երեկոն էր. ջինջ ու կապուտակ երկնակամարին մէջ, պատկառազդու հանդիսաւութեամբ մը կը լուրար գիշերային թագուհին

լուսինց, իր խորհըրդաւոր ու կաթնադպոյն ճառագայթներով արծաթազօծելով նահրել-օմարի անապատը, ուր կառուցուած վրանային քաղաքը, թաղուած խօր քունի մէջ կը հանգստանար:

Մոծակներու ինքնակոչ երաժշտախումբեր, իրենց սուինաւոց հետեւ որդներով, պաշարած են անկողինս, իզուր կը տքնիմ վերմակի մէջ ծրարուելով խա-

փանել անոնց սուիններու հարուածները. վերէն վարէն, աջէն ու ձախէն, ծակմը, անկիւն մը կը գտնէն. ներս կը մտնեն կ'երդէն ու կը խօստեն. Այսօր



Ե. ՎԱՐԴԱՆԵԱՆ

կարծես սոծակները սովորականէն աւելի եռանդ՝ ըստ յայտ բերած են, ու իմ ինքնապաշտպանութենէս զայրացած վճռած են իսդաւ քթիս. Այլեւս չը կարողացայ դիմանալ. վեր եւայ վերցուցի մենաթեանս մտերիմ ընկերոս ծխատուփս ու դուրս ելայ գրանես:

Լուսին հայրքը, շրջապատիս անապատավայր լուսաթիւնը, սպիտակ կտուրներու խորհրդաւոր միօրինակութիւնը. վայրկենապէս յափշտակեցին էութիւնս. մոծակներու համերգն ու սուիններու հարուածները մուռացայ: Բնութեան գեղեցկութիւնը վայրկենապէս զգալի դարձուց զիս տարագիր դժբախտիս բովանդակ դառնութիւնները. Վայրկենապէս ուռած սրտէս հրաբուխի մը նման դուրս պռութկաց խօրունկ հառաջանք մը. գաղթականի ահաւոր վիճակը ծանրացած էր սրտիս. կ'զգայի որ դժբախտ ժողովրդեան մը աննշան մէկ հուլէն էի ես. կ'զգայի որ ամայացած հայրենիքի մը ընկճուած ու յուսահատ մէկ սեւաբախտ սրդին էի ես:

Աչ կողմս կը տարածուէր վրանակերտ հիւանդանցը իր դժբախտ բնակչութեամբ, որոյ անքուն աչքերէն հոսող փալփլուն կաթիւները լուսնի պաղ ցուքերուն տակ կառկայծէին, անոնց վշտատապակ սըր տերէն ժայթքող մաղձոտ հաւաշանքները, իրենց այրուած շրթունքներէն սահերթ, զայրացկոտ պտոյտներով ու ահաւոր պիւնիքով եթինք կ'ուղղուէին խաթարելու լուսներկի հաճելի կաթնադպոյնը, վեզ-

առաջար սրտերու հալեցնող հառաջանքներն էին առնոնք ու ու ահաւոր. Որքան կուզէի անգուն ժամեթև այդ դժբախտներէն անգուններու քով անցնել, անծնց ցաւովը տառապիւ, անոնց արցունքնն ու հառաջանքին մասնակից ըլլալ. չէ՞ որ այդ ալ կը թեթեւացնէր, կ'սփոփէր քճքնեւան սիրաս որ կ'ուուի ու չի պայթիր, որ կը փռփրի բայց իր պատերը չի խորակեր.

Կը դառնամ դէպի ձախ, 40 վրաններէ բաղակացեալ օրբանացն է ան, ուր կ'ապրիմ և ես. Վարանստ քայլերով կ'անցնիմ վրաններու եզերքներէն. 850 փոքրիկներ, տաքութենէն վրաններուն տակ պառկիլ չի կարողանալով, խառն ի խուռն ցրուածեն վրաններու շուրջ ու մշիկ մշիկ կը քնանան: Ո՛հ, երջանիկ մանկութիւն, պէմուրազ աշխարհի տառապանքին էն զարութիլի բաժտավը մինչև իր յետին մրաւը ըմպելէ վերջն իսկ. որքութեան ու զգաթշով պլլուած, լուսնի պազ ցոլքերու համբոյըններու տակ կը քնանան անոնք խսդաղ ու անդորր.... Այս որքան, որքան կուզէի ես ալ մանուկ մը լինել այս անմեղուկներու նման և մշիկ մշիկ քնանալ. որքան կ'օւզէի կեանքի այդ մեծագոյն բարիքը վայելել իսա, զազ ու անվեդով, կը մօտենամ փոքրիկներէն միոյն, վերմակը մէկդի հրած պառկած է կոնակի վրայ, ձեռքերն ու ոտքերը տարածելով կրցածին չափ լայն, Մորիկնոսը խաչած էր զայն... հետաքրքրութեամբ

«Կորոստեհան» կ ասները նակր-է-օլսար կը լրա ժամանակ (կը ժամանէ)




Կը դիտեմ փոքրիկ կուրծքը որ բարակ շնչառութենէն կը բարձրանայ ու կը ցածնայ. պղտիկը կը քնանար իսպաղաղ քունով մը. բայց անհանգիստ կուրծքը արթաւն էր ու իր պարտականութեան գլուխ. ան կը բարձրանար ու կը ցածնար, մարտկային գործարանը կ'աշխատէր անդուլ, և կեանքը կը հոսէր փոքրիկի փոքրիկ երակներէն ներս. ան կը մեծնա՞ր... ջարդու փշուր եղած ցեղի մը ապագայի սիւներէն մին պիտի ըլլար ու ես ակնապարար կը դիտէի այդ մատադ տունկի աճիլը, որը մեծնալով մեծնալով ստուերանիտ կաղնի մը պիտի դառնար մի օր իր շուքին տակ հայրենի աւերակները հովանաւորելու համար. Կարգով աչքէ կ'անցնեմ բոլոր փոքրերը. բոլորն ալ կը քնանան անուշ քունով մը. որքան հաճելի է լուսնկա ի շողերով շրջել այս փոքրիկներուն բուրատանին մէջ. Որքան ակնապարար է փոքրիկ կուրծքերու միօրինակ ու համաչափ բարձրանալն ու ցածնալը. որքան միսիթարական, որքան յուսադրիչ է ցեղի վերակենդանութեան այս ոգեւորիչ պատկերը. Իցիւ թէ գերբնական կարողութեամբ մը օժտուած կարողանայի կարդալ թէ ապագան ի՞նչ է վերապահած այս բուրատանի մէջ լսիկ մնջիկ մեծօղող ապագայ սերունդին, իցիւ թէ տեսնել ու կարդալ կարողանայի սիրտը այն Արարչին, որու ամենակարող ստեղծագործական կարողութեան զը վերագրուի այս գեղեցիկ երկնակամարը. Կուզէի կարդալ սիրտը ստու

նասիրա լուսնեակին, հասկնալու իր այս կախարդիչ պայծառութեան տակ պարփակուած զգացումը վերաբնող ցեղի մը կենսունակութեան հիացումի՞ թէ ոճրապարտի մը յագուրդը ոռոցադրող ցնեսութեան մը հետեւանքն էին, փաքրիկներու մատղաշ այտերէն քաղած իր համբոյրները, կը մօտենամ փոքրիկներէն միայն, վերսակին մեծագոյն մասը քնացող պղտիկին տախն է. զգուշութեամբ կը քաշեմ. պղտիկը կը շարժուի, յօրանջելու նման շարժումներ մը կ'ենէ ու նորէն կը թաղուի խոր գունի մէջ. Ես ծածկելով զինք կը մօտենամ երկորորդին, երրորդին. Ցանկացել վրանաշարքի մէկ ծայրէն կը լսուի ընը, ընը՝ հազարու ձայն մը, ապա լապտերի մը աղօտ լոյսը կը ճառագայթէ. Որքանոցի գիշերային պահապաններն էին. կը մօտենան, հետաքրքրութեամբ կը դիտեն շարժումներս. պապ իմ յանդիմանական ամսարկները հասկացած, լոււր ու մունջ կը ձեռնարկեն սկսած գործի շարունակութեան. հաստատ համոզուելով, պահապանները սկսուած գործը մինչև վերջը պիտի տանին, Ես մատներու մէջ սիկաւու ոլորելով կը յառաջանամ, և եթէ մէկը այդ վայրկեանին ուսիս զարնելով հարցնէր թէ ի՞նչ կը խորհիս. պատասխանը լինելու էր ոչի՞նչ.... Եւ իրաւ ալ լուռ ու մտած կոտ երեւոյթիս ճիշտ հակապահկերն էր ուղեղք ուր բացարձակապէտ ոչի՞նչ կաք, կարծես քնացած լինէի. կը շարժուէի. կը ծխէի շարժուն մեքենայի մը

հանգոյն, ուղեղս ու ջրերս այնքան վատ ցնցում մը
կոտ էին որ կաթես յոզնած կը քնանային, թէւ
ես կը քալէի.

Յանկարծ ինքինքս գտայ փոքրիկ փոսիկի մը
առաջ, գերեզմանոցն էր այն, որ հազիւ որբանոցէն 100
քալ հեռու էր, Նահր Էլ-Օմար հանելէս ի վեց
երրորդ գերեզմանոցն էր այս, որ որպէս անպէտք
և անգործածելի մի գետնի, արաբները արտօնած
էին որ մեռելները թաղուին. այս անպէտք հողին
մէջ սակայն մեռելները հանգիստ էին, որովհետեւ
արաբներ այլեւս գերեզմաները բանալով մեռել-
ները դաւրս նետելու նման ցուցեր չէին ըներ. ցոյցեր
մը որ ըրին նախկին երկու գերեզմանոցները որպէս
գերեզմանոց գործածելը արդիւելու հաճար, Երկար
դիշեռանոցով, գերեզմանոցի մէջ կանգնած, լուս-
նեակի լոյսով օղուզուն, կատարեալ ուրուականի մը
երեւեյթն ունէի. Հանդիսաւոք հանդարտութեամբ
մը կը դաւնամ չօրս կողմս, ու կը գիտեմ անշուռ
բռւնծերու խնամոտ շաբաթը. որոնք լուսնկայ գի-
շեթուան խորհրդաւորւթիւնովը շոշապատօած եր-
կիւղ ու պատկառանք կաթաշնչէին. մեռենե՛ր...
մեռելնե՛ր... ինչո՞ւ չեմ տեսներ. ո՞ւր են ձեր ան-
հանգիստ ուրուականները, կը շանչեմ ես մոռվին,
բարձրաձայն արտայատուելու գաջութիւնը չտւն-
նալով. ու յոգնած կը նստիմ հողաթումքի մը վրայ-
թայց հազիւ թէ նստած էի, երբ ետեւէս լսելի ե-

Նահր Էլ-Օմարին կը սկսի սէպի ծրուտարէլ



դաւ զի՞ւ երաժշտութեան մը միօրինակ խաղերու անվերջանալի շեշտերը, սարսափած վեր ելայ, տղեցի ստուգել թէ ո՞ր տեղէն էր որ կը լսուէր այդ ձայնը, ու մինչ ես վնատութիս մէջն էի, անա գերեբամանոցի ջօրս կողմէն լսելի եղան նախ ձայներ ճը՛ռ . . . ճը՛ռ . . . ճը՛ռ . . . վայրկենապէս զարհուրանց շրջապատեց զիս. ինծի այնպէս կուգար որ ուրուականները արձագանքած էին իմ կողոս, և Խոռուերամ դուրս Խոռուած ներկայութիւնին դգալի դարձնելու թշուառիս, որ կէս գիշերուայ այս խաղաղ ժամին, գերեզմանոցը գալու յանդանութիւնը ունենալով, խանգարած էի իրենց յաւիտենական հանգիստը. Ամբողջ մաքսովս աչք ու ականջ դարձած, զգուշութեամբ կը դիտեմ շուրջը, տեսնելու ուրուականներու երկայն ու զարհութիւնակները, որոնք անխօսափելիօիէն հետեւելու էին լսուեց ձայններուն. Յանկարծ նկատեցի որ, հողաթումբերուն մէկուն վրայէն կը լսուէր միօրինակ երաժշտութեան ձայնը աւելի աւելի և աւելի բարձր, Կամաց կամաց մօտիկցայ, ու լուսնի լոյսով շատ որոշ կերպով դիտեցի փոքիկ ծղբիդն, որ իր թափանցիկ թեւերը օդի մէջ պարզած, իր մեծութեան անհամապատասխան գոռ ձայնով մը կ'եղերեզէր իր գերեզմանոցային ողբը. Հըսածեւտ տուած դատողութիւնս կը վերադառնար, և ուրուականներու ձայններու տեղ, այժմ ականջիս մէջն

էին բազմաթիւ ծղբիդներու միօրինակ համերգները. Մեցենաբար ձեւած ծխատուփիս մեկնեցիլու սիկառ մը վառելով սկսայ տեսնդու փութկոտութեամբ մը ծխե՛լ... Դժբախտ մեռ ելսերու ողբերգուներ, երգեցէ՛ք սրգան կեանք ունիք, ողբացէ՛ք, ո՞րքան շանչ ունիք, որովհետու մենք այնքան ողբացինք որ ողբը մեզ իր իմաստը կորսնցուցած է, այլեւս ողբի ձայներէն չենք յաւզուիր. այլեւս մեռելներու շաբաններ չեն աղդեր մեզ, որովհետու ամէնքս ալ մեռելներ ենք ու կանգնած գերեզմանոցի ճամբին, գէպի գերեզմանոց ուղեւորողներու կարաւանը այնքան մեծ, այնքան ստուարաթիւ է որ ողբացող մը չը կայ այլեւս. Լուսնկայ գիշերներ հնչեցուցէ՛ք ձեր եղերերգերը կը քըսածնուդ չափ ուժեղ, որովհետու նահր-էլ Օմարի աւազներու մէջ իր շունչը վհօն ժաղովուրդը մըցանք չունի այլեւս, նահր-էլ-Օմարի տնապատօն ոչ կռաւնկ ունի ոչ անծեզ, ոչ սոխակ ունի և ոչ ծիծեռնակ, ոչ աբագիկ ունի և ոչ նոյն իսկ ողբերգու ու չարագուշակ բոււերգեցէ՛ք ծղբիդներ, երգեցէ՛ք ձեր համերգը, երգեցէ՛ք անապատի միակ փառք ու պարծանքը եղող երաժշտագէտներ. Հայրենիքի արտերու մէջ գլխահակ հասկերուն ի տես երգաղներուն միայն կը վայելէ գլխահակ բռւնծերուն ի տես երգել, երգեցէ՛ք որովհետու այս անշուրք բռւնծերուն տակ կը հանգիյն այն գլխահակ հասկերը մշակող ժրաջան բազուկները....

Հալածականի քայլերով գուրս կ'ելլեմ գերեզման
նոցէն . ու կ'ուղաւիմ ողբանոց, մինչ ականջներուն
մէջ լսի էին տակաւին գերեզմանոցէն լսուող ծըղու
քիդներու համերգները ճըռ... ճըռ... ճըռ... .

Ե. Ա. Շ. Գ. Ա. Յ. Ա. Խ. Ա. Խ.

28/8/22 երուսաղէմ

ԿԵԱՆՔԻ ԿԱՆՈՆԸ

Տ Ա Ս Ն Ե Ա Կ

Եթէ կ'ուզիս ըլլալ գում՝

Աւողջ հարուստ իմաստուն,

Զէնիք միս օդի մ'առներ տուն,

Աչ այր կամ կին վատանուն,

Մի՛ շպար մի՛ զգեստ գոյնզգոյն,

Կըղեր բըժիշկ անկըրօն,

Կանո՛ւխ արթուն կանո՛ւխ բուն

Եղիր առտու իրիկուն.

Մըմնջէ միշտ հին Հայուն՝

Հըզօ՛ր Հայր—Մերն հուն անհուն.

Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆ

ՀԻՆ ՕՐԵՆՐԷՆ

ՀԱՅԵԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿՐԵՏԵՒ ԳԱՆՏԻԱ ՔԱՂԱԿԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԾԱԳՄԱՆ ԵՒ ՏԵՂԻՈՑՆ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄՊԱՒՆ

Կրէտէի Հայոց հոգեւոր հովիւ Գեր. Տ. Գարեգին
Վ. Արքունի Տարեցոյիս կը նուիրէ հատեւեալ շա-
հեկան մանրամասնութիւնները տեղւոյն Հայութեան
ծագման եւ եկեղեցւոյ շինութեան համար.

Ապօ անուամբ ազնուական Հայագգին շուրջ
երեք դար առաջ Կրէտէի գրաւման միջոցին, այ-
սինքն Հիւթեթի 1056 և Քեր.ի 1646 թուին (Տե՛ս Հի-
ւանդ. Ընդարձակ Օրացոյց 1903 տարւոյ) Օսմ. բա-
նակին մէջ վաճառական ըլլալով, իթ ճարտարախօ-
սութեամբ յաջողած յաղթական բանակին հրամա-
տարէն քաղաքիս մէջ եկեղեցի մը առնել, անշուշտ
իր բարւոք ծառայութեան իրբ վարձք, զոր վերա-
նորոգել տալով և շրւրջը գտնուած տուններն ալ գնե-
լով, իթը կալուած եկեղեցւոյն յատկացուցած է.

Հետեւեալ յիշատակարանը, քաղուած տեղւոյն
թաղ. Խթհոդոց տումարէն, նմանահանութիւն է

Զմիւռնիս Առաջնորդաթանի տումարներուն մէջ եղած արձանագրութեան մը, Ասկէ կարելի է հետեւցնել թէ Ապօ (և գուցէ իր նախնիք նոյն քաղաքացի ըւ- ալով) սոյն եղեւութիւնը ի դարձին իր հայրենիքը տեղւոյն հագեւոր իշխանութեան յայտնած է եղեք, որ եւ իր կարգին արձանագրած է իր տօմարին մէջ, իբր Ազգ. ուժականութիւն և ի գիտութիւն ապա- գայ հայ ժողովրդեան, մանաւանդ թէ հարկն ալ այդպէս կը պահնանջը. Յօրքան զբէտէ կազին ի սկզբան Զմիւռնիս առաջնորդութեան Skravellի վի- ճակին մասը կը կազմէր. և 1828 թուէն ի վեր է որ կրգին մասնաւոր թեմի փախուելով Պալոյ Պատրիար- քարանի (Կամ լաւ եւս Ս. Պատրիարքին ուղղակի իրաւասութեան ենթարկուած է առանց առաջնոր- դական հանգամանք ունենալու.)

ՊԱՏՃԷՆ ՅԻՇՈՑԱԿԱՐԵԱՆԻՑ

ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԶՄԻՒՐՆՈՑ

Համար . . .

Ապօ էֆէստին հայրն Ալիքիար 1632 թուականին յերւածաղէմ յուխտ կ'եթայ:

«Արքահամ, այս լայնախորհուրդ, ժամանեալ յաստիճան տանուական, քան զիւր նախնիսն աշ-

ռաւել եւս հետամուտ լինի բարի համբաւայ. և ըստ նախնական կըթութեան և մտացն առատութեան և եւս բարգաւածի օր ըստ օրէ, սիրելի եղեալ յաջ ա- մենեցուն, և մանաւանդ Հիւտէյին հոչակաւոր փա- շայի, որ զօրագլուխն էր զօրաց պատերազմականաց ընդ կրէտացիս, եւս ապա Թէօվիրիւլի օգլւս Մէհմէտ փաշայի մեխանամբաւ նպարգոսի և ամեննայն աւա- գանւոյն դրան արգունի, զորոյ և զանուն իսկ փոխ- եալ Քէօփիւլէւ օգուն հրամայէ Ապօ(1) Հայնել յետ աշնորհիկ, որ կոչումն կայ մտաց ցայսօր ծամանակի յազգս նորբա:

«Սա յարժամ ի կրէտէ էր ընդ բանակին Օսման- ցւոց արգունի վաճառական գալով Հիւտէյին փաշա- յին, յառնուն նոցա զկլզին, ճարտարաբան վիճա- բանութեամբ առնու զեկեղեցի մի վասն Հայոց, զօր վասն ամեննայն թնդանօթիցն քայթայեալ եր, իւրովք իսկ ընչեւքն նորոգէ, պատրաստեալ եւ զամեննայն զարդա նորա, եւ վասն զի բազում նպաստաւորու- թիւն արարեալ էր բանակին և հաւատարմութիւն միրս արգունի ընդ ամեննայնի, զօրաւոր խաթթի ներփառ մի շնորհէ նմա Սուլթան հպրահիմ (Ա.), որ- պէս զի յամենայնի ազատ լիցի եւ համբաժակ եւս, և ի մաքսիցն անգամ յամենայն տեղիս իշխանու- թեան իւրոյ,

(1) Ակրօ Սահակ էիմենին անշուշ կը իշուի եւ իր ազգատումը:


Ապրօ երթայ ի Կ. Պոլս 1661 Թռւականին
 Սուլթան հպրահիմ (Ա.) 1645
 Սուլթան Մէջմէտ (Դ.) Ղազի 1668
 ՆԱԽՈԹ. -Վերի բռւականներուն հետ բաղդատելու
 համար:
 ՍՈՒԼԹԱՆ ԻՊՐԱՀԻՄ (Ա.) ՍԼԹ. ՄԷՋՄԷՏ Դ. ՂԱԶԻ
 ԾՆ. ՀԻՃՐ. 1024=ՔԹ. հ 1615 ԾՆ. ՀԻՃՐ. 1051=ՔԹ. հ 1641
 ԳԿԱԼ. 1049=> 1639 ԳԿԱԼ. > 1058=> 1648

Կը տիե՛ Կրէտէի
Հիճր. 1056 ՔԹ. հ 1646

Վկան. 1058 > 1648 Վկան. 1104 , 1692
 Ուրեմն Կրէտէ կղզւոյն տիրապետան ճիշդ-
 թռւականը ընդունելով Հիճրէթի 1056ը և ՔԹ. ի
 1646ը, սերկայ 1922 թռւականէն հանելով Կ'ուռնե-
 նանք 276 տարիներ եկեղեցւոյն ստացումէն ցարդ.

Բայց Յիշատակարասնին մէջ կ'ըսէ թէ «Ճարտա-
 րաբան վիճուբանութեամբ առնու զեկեղեցի մի վասն
 Հայոց». սա վերջին երկու բառերէն կը հետեւի թէ
 յիշեալ Ապրօյի հոս (ի Կրէտէ) գալէն առաջ, արդէն
 հայ գաղթականութիւն մը գոյութիւն ունի եղեք
 կղզւոյն մանաւանդ Գանտիա քաղաքին մէջ (ան-
 շաւշտ Վենետիկեցւոց կամ ծենեվացւոց տիրապե-
 տութեան ատեն), վասն զի եկեղեցին «վասն Հայոց»
 ուզուտ և առնուած է.

Այսուամենախի այդ հին հայ գաղթականու-
 թեան մասին օրեւէ տեղեկութիւն չկայ.



Ցոյժ զարմանալի կը թուի ինձ, որ աշխարհի բռ-
լու կողմերը ցոռւած Հայութեան ծագման մասին թէ
անցորդներ և թէ յատկապէս այցելութեան ելլոյներ
ընդարձակ գրած են. իսկ կրէտէի համար ոչ մի
բառ. Արդեօք ի՞նչ է պատճառը որ մեր նախնի գիտ-
նական ճանապարհորդները չեն ցանկացեր այս կողմը
գալ. Շոգենաւեներու Շգյութիւնը, և առաջաստա-
նաւերով ճամբարդեաւ դժուարութիւնն է երեւի զա-
նանք կամցուցեր հոս գալու, և որով տեղուոյն հայ
գաղթականութեան անցաւին և տեղուոյն մէջ տեղա-
տրուելու մասին բառ մը իսկ չէ գուտեր.

Կորուստը մեծ է արդարեւ.

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԱՐԺՈՂՈՒՄԻ(*)

Գանտիա

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Երկնիքի բոլոր կայձակներն իսկ բաւական ժն
պղծութեան ամօթը սրբելու մեր արդար ցեղի նա-
կատից,

Ա. ԱՅՍՐՈՒԵԱՆ

(*) Տ. Քարեզին Վ. իր այս շահեկան գրութեան
կցած էր նաև իր իսկ ծեռքով զծած մի բանի տե-
ղացոյց պատկերներ, սակայն Ճարեցոյցիս փոքր ծա-
ւալը այդ մասին թոյլատու չինելուն զանց ըրինք զա-
նոնք, միայն Նկեղեցւոյն արտաքին տեսքը ցուցա-
դրելով.

ՀԻՆ ԷՇՉԵՐ

ՄԵՆԾ ԱՂԱՆ

Մենծ աղան հարուստ դրամատէր մը չէ. բայց
դրամի մարդն է անիկաւ. Մենծ աղային զատողու-
թեանը առջեւ դրամը մեծ ծանրաչափն է մարդկային
առարինութիւններուն. ոչ Ռաֆֆին եւ ոչ Գուբեանը,
ոչ Պարոնեանը եւ ոչ Նալբանդեանը արմէր ունին
աչքին առջեւ. ո՞րչափ է աննոց դիզած դրամը. տա-
րեկան ի՞նչ կը շահին. ո՞չինչ. ուրիմն բան մը չին
արժեր. ահա անոնց բոլոր հոգեքանութիւնը. չիմ մե-
ջազդիք, յանցաւոր չեմ գտներ զիբենք այսպէս խոր-
հենուն համար. իրաւունք ունի՞մ կոյր մը, կաղ մը
մեզազդիլու. զժբախտութիւն մըն է ասիկա եւ ոչ
ուրիշ բան:

Մենծ աղան բարձր կը խօսի, զգացնել տալու
համար որ ամէնքը պարտաւոր են իրեն ունկնդիեր. ճամբան կամաց կը բալէ եւ կը պահանջէ որ ուրիշ-
ները իր ետեւէն գան, կամ բազմութեան մէջ կը
հրաշտէ բովինները, իր տեղը ամրուին մէջ չըլլալը,
այս գոեհիկ շիփումին չի հանդուրմելը հասկցնելու եւ
այս նուաստ զիբենք վայրկեան մը առաջ դուրս ել-
լելու համար.



Ն. ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՌԱՍ ԹԷՖԵՐԻ
Գահաժառանց Խօխան համայն Նրովպիոյ

— 101 —

ԵԹՈՎՊԻՈՅ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒԻ ԳԱՀԱԺՈՌՈՒԴՅ

ԵՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Մենելիք Կայսեր մահէն յետոյ յաջորդեց իրեն թոռը կիմ Եասու Գազիւ 15 տարեկան որ իր ան-Հափահասութեան պատճառաւ՝ ինամակալ կարգուեցաւ իրեն Եաս Թաշաման որուն մահէն վերջ կիմ Եասու 17 տարեկան պատանի մը սկսաւ միտնեծան իշխել բովանդակ Եթովպիոյ վեսպ Հպատակեցնելով ի- րեն բոլոր Ռասուրը՝ նահանգապետները՝ որոնք մէկ մէկ թագաւորներ Են իրենց սահմաններուն մէջ, ու- նենալով իրենց ուրայն վարչութիւնը, բանակը, եւայլն։ Հականակ որ դեռ պաշտօնապէս գահ բարձրացած չէր ոչ ալ կայսր Տաշակուած՝ արդէն բոլոր Ռասուրը կը իսանարհէին իր առջև, կէտ առ կէտ գործադրե- տով իր հրաւանները, Այնքան մեծ ժողովրդականու- թիւն շահած էր իր կորովի նկարագրովն, իր անզե- ներ կեցուածքովն, իր անսեթեւեթ պարզութեամբը որ ոչ ոք չէր կրնար երեւակայել թէ իր կերպնական անկումը այնքան մօտալուտ պիտի ըլլար, ինչ որ զինքը պիտի կորսնցնէր, գերյան քաղաքականութիւնն էր, Ըսդհ. Պատերազմին Կերման Կառավարութիւնը, ինչպէս յատնի է, ուժեղ բրօքականտ մը սկսած էր

— 103 —

գումը իր աւտոնդութիւններուն ամրապէս կառչած ժողովուրդին մտայնութիւնը վեր ի զայր շրջելով վըտանդաւոր կացութիւն մը չստեղծուելու համար.

Իմանի մը խօսք ալ կ'արէէ ընել այս առթիւ Ես թովպիոյ Հայ գաղութին մասին՝ որու հանդէպ համակեր վերաբերում մը ունեցած է եւ ունի եթովպական կառավարութիւնը, Հայ գաղութը ցրուած է Ատիս Ապապահի, Հարարի, Տիրէդառահի մէջ, Մեծամասնութիւնը շուրջ 200 անհատ կ'ապրի Մայրաքաղաքին Ա. Ապապահի մէջ, Ամբողջ թիւը հայ գաղութին եթովպիոյ մէջ 350-ը լանցնիր, Պէտք է յայտնել ի պատիւ Հայ գաղութին թէ արտասահմանեան գաղութներուն ամէնէն ուշիմ զարգացեալսերէն մին Է եթովպիոյ Հայ գաղութը. իր մէջ ունի նախկին բազմահուտ ուսուցիչներ, Պէրալէրեան Վարժարանի ընթացաւարտներ եւ Բարիգի Ecole des Ponts et Chaussées էն կայեալ, Եւրոպական համբաւ ստացած, նշանաւոր մաթեմատիկոս եւ աստեղագէտ Պ. Գր. Հովուեան որ միշտ թղթակցութեան մէջ է մեծանուն թլաւ մարիսնի հետ.

Հայ գաղութին պատիւ բերդող այս գիտնականը արհիտե և ingenieur en chefի պաշտօնով կը գտնուի եթովպական կառավարութեան ծառառութեան մէջ. Թէ բազդի ի՞նչ հակադրութեամբ այսպիսի Հայ գիտնական մը եկած ինկած է Ալբիկէի խորերը, այս մասին երկար կ'ըլլայ խօսիլ. Պետական ծառայութեան

մէջ ունինք նաև ուրիշ Հայեր՝ որոնց մէջ բարձր գիտք մը ունի Պ. Աբրահամ Քէօրծամեան որ իր ու շինութեամբ, մանաւանդ իր օրինակելի, եւ անստիւտ ուղղարարութեամբ եւ պարկէտութեամբ լիովին արժանացած է Ն. Բարձրութեան Գահաժառանգ իշխանին լիակատար գտանութեան եւ գնահատումին, եւ կարգուած է վերջերս Տնօրէն Գահաժառանգին բարձր կալուածներուն եւ անձնական գանձուն, Թէ սրբան գնահատուած է նոյնիսկ օտարներէ Ա. Ապապահի Հայ գաղութը, Կ'արէէ յիշատակել սա պարագան. 1918 վերջերը Հայ գաղութը սարքած էր շքեղ հանդէս մը որուն անձնամբ Կը նախագահէր Գահաժառանգ իշխանը եւ որուն ներկայ էր գետպանական մարմինը ամբողջութեանը, Անդիսի, Ֆրանսահի, իտալիոյ, Ռուսիոյ դեռօպանները իրենց հիւատառներով. Յետ աւորտաման հանդէսին գետպանները շերմակէս շնորհաւորեցին հանդէսին կազմակերպիչները, եւ իտալիոյ ներկայացուցիչը կ'ոսէր սա բառերը. «Որտագին կը շնորհա որիմ ձեզ, Հայեր, որ գաղաքակրթութիւնը ընթացքին Ա. Ապապահի Հայ գաղութը որու թիւն կը յանձն 200ի, ուորէտ մած մասը կն և երախայ, 25,000 թաւերէ, 2500 անգլ, ուկին սուիրատութիւն մը ըրած է սարեգո ծական սպատակներով. Այս թիւը սուհրատութեան աւելի պերճանու է քան ո եւ է գույսու հանդէպ գաղութին».

Ա. Ապապահի Հայ գաղութի մէկ մասը կը բաղկանայ առեւտրականներէ, եւ միւսը արհեստաւորներէ, Արհեստաւորներն եւ ոսկերուչ, կոշկակար, ատաղձագործ, հիւսն, եւայլն, Ամենք ալ ինքնօգնու-

թեամբ եւ ցեղին յատուկ ճարպիկութեամբ, իրենց համար համեստ դիրք մը շինած են եւ հանգիստ կ'ապրին. Առեւտրականներուն մէջ մեծ դիրք գրաւած են Մաթիկ Դէորդօֆֆ, Դէորդ Մուրատեան. Եսայի Կարիկեան տուները. Գաղութը ունի երկու վարժարան մը զոր կը վարեն ուսուցիչ մը եւ ուսուցչի մը տալով նախնական կըթութիւն մը տեղուն հայ մանկությ. Սոյս վարժարանը հիմնելով գնահատելի նախաձեռնութիւնն ունեցած է գաղութին առեւտրականներէն Պ. Յովհաննէս Ասատուրեան, նախկին ուսուցիչ եւ ճեմարանական.

Տեղայն ազգ. գործերը կը վարէ գաղութէս ընտրեաւ և եգիպտոսի Առաջնորդէն վաւերացեալ Թող. Խորհուրդը, Խոչպէս ամէն տեղ, Նախապէս Եթովպիս մէջ կը մղուին կուսակցական պայքարներ Թազ. Խորհրդոյ շուրջ այս կամ այն խնդրոյ առաթիւ. Բայց այս՝ պատճառ մը չէ եղած որ, որ եւ է առթիւ. Բարդգործական նպատակներու շորջ չի միաբանին եւ իրենց նիւթական լիառաւ օժանդակութիւնը չի բերեն ի սպաս ցեղին Թշուառութեան եւ կարօտութիւններուն. Եւ այս, ըստ ամենայնի պատուաբեր Եւայ Գաղութին եւ վերագրելի անոր սրտի եւ մտքի զարգացման. Ազգին անվերջանալի գողթականութեանց Ափրիկէի խորերը Նետուած այս նմայշը միթէ ապացոյց չէ՞ ցեղին անսպառ կենսունակութեան, ճկունութեան, ճարպիկութեան եւ բարուական անընկծելի կորպին.

Քատըբէօյ, 2 նոյեմ. 1922

Ս. ՍԵՄԵՐՃԵԱՆ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՐԳՈՒԽԻՆԻ ՎԱՐՈՒԱՊԵՏ ՊՈՂՈՍ ՊԵՅ ՏԱՏԵԱՆ

ՈՐԴԵԳԻՐԸ ՄԿՐՏԻՉ ՊԵՆՏԵԲԵԱՆ

ՈՒ ՍԻՄՈՆ ԾԱՌԱՆ



Վառօդապետ Պօղոս պէյ Տատեան Արեւելեան պատերազմէն վերջը, 1857ին, որչափ կը յեցեմ, Եւս ըսպա Ճամբորդել կը հարկադրուի ու իր հետեւըդներուն մէջ կ'առնու իր որդեգիրը Մկրտիչ Պէստէրեան ու ծառան Սիմոն, այս վերջինը Վանի գիւղերէն։ Պէյը Բարիկ քանի մը ամիսներ կը ստիպուի մալ. այս աւետիսը Պէստէրեանին և Սիմոնին հազարդած ատեն, կ'աւելցնէ թէ «4—5 ամիս, կ'երեւի, հոս պիտի մասնք, նայեցէք որ հետերնիդ բան մը տանիք Պոլիս»։

— Ի՞նչ տանինք, Տէր, կը հարցընեն։

— Արհեստ մը, բան մը սորվեցէք ու այնպէս մեկնեցէք քաղաքէս, կ'ըսէ բարեյշատակ Տատեան Պօղոս պէյ։

Երկուքն ալ կ'ուրախանան և երկրորդ օրը փողոները կը չափեն արհեստ մը ընտերւու համար։

— 109 —

Վերջապէս կ'որոշեն. Պէնտէրեան փորագրիչ ըլլալ
կը մտադրէ, իսկ Սիմոն պահպաղակ շինող.

Երկրորդ իրիկան Գօլոս պէյշն բան մը ըստելու
ձեւով խնդումներես կը ներկայանան և՝ կ'ըստեն թէ՛
երկու արհեստ ընտրած են, փորագրութիւն և պազ-
պաղակաշինութիւնն

Պէստերեան մեքենայով քարի վըսոյ փորող վարպետի մը զարմացած երկար ատեն խալչած դիտած էր, իսկ Սիմոն պաղպաղամներուն սահնուած էր:

Վառողապետը շատ գոհ մնաց «Ն էր եղած զնուրացնելն էն, Պէստէրեան ուսեալ, կայտառ և ուշիմ տպայ մըն էր և վատահ էր, որ պիտի իրնար սորվել, իսկ Սիմոն թէեւ այբք տեսնէր ընչն կը փախնէր, սակայն գիտէր թէ պաղպաղակաշնութիւնը պիտի կրնար իւռասնեւ:

Երբորդ օրը վարպետները որոշուած էին և Պողոս
այսի առաջաձեռնած կարեւոր գումարներու փոխա-
րեն յանձն առած էին կարճ ժամանակի մեջ սօրվե-
ցնել իրենց արհեստու ամ ենու տամաչամ տոռու:

5-6 ամիսէ վերջ վառութապետին յայերը պըս
սակաւած էին և աշխարհաները վարպետ եղած թարի-
զէն Պոլիս կը վերաբառնամին:

四

ՄԿՐՏԻՉ ՊԵՂՑԵՐԵԱՆ

Մկրտիչ Պօլիս դաւանակէն յետոյ հետզհետէ կը
սկսի փայլի և կը փախադրուի ԵՀԿի Գաբուէն թերա,
ուր փառաց գագաթնակէտը կը հասնի. 5-10 տա-
րիներ բաւական կ'ըլլան՝ իր վարպետը գերազանցե-
լու. իր փոքրագործիններուն հաւասարող չի գոտ-
նուիր. մեկ գիշե 10 ֆրանքի կը փոքրագործէր.

ՊԵՆՏԵՔԵԱՆ մետաղներու, փոքր քարերու, սակի արծաթի և պղնձի վրայ մկան էր դէմքերը ալ փորագրել, այսպէս մաքուր և նուրբ որ չնագէտները չէին կրնար դանազանել իսկականէն:

ՊԵՆՄԱՅԻՆ ԿԵՎՃԱՐՈՒՐ մը չէր սակայն, իր բոլը փորագրութիւններուն մէջ իր անուան սկզբնատառը գլխագիր Մ. Գիրը կը դնէր մանրացոյցով հաղիւ տեսանելի:

Հայ թագաւորներու և Հռովդայեթի կայսրերու,
Հին դրամներու ձիշը կը փորագրէր. ո՞քան Տիգա-
ռաններ, Տրդատներ, Հայ իշխաններ ու կոյսեր ու
Աղեքանների գուամներու օրինակները փորագրէր էր.
Ի՞նչ ոսկեզն Խօսքեր ու ստանալորներ նիստ փոքր
քարերու վրայ դրացներ էր անջնջելի տաւերով.

Հատ մը անէի իրք յիշատակ, հօրս մօքագողզ
զաւեկն սիրենի ԳԵնտէբեռնէս, որ փողկապիս ասեղին
քարին վրայ փօրտգոտ է աւուցչիս, Յ. Ոսկանի աա-
տողերը, ամենքն ալ գլխապիտ.

Ուղեւորին ի պանդոկէն
Զիք ինչ իւր,
Ապա զի՞նչ մեր,
Աշխարհն՝ պանդոկ
Եւ մեր՝ հիւր :

թ. ՈՍԿԱՆ

Կը ցաւիմ որ գողցուցի և իր յիշատակէն բան մը
չունիմ քովս, Պէստէրեան վերջի տարիները գիւտ մը
ըրած էր, բաղադրութեամբ մը կը գրէր քարերու
վրայ և զանոնք կրակին մէջ կը դնէր ու քեզ վերջ
կը հանէր և գրուածքն անայլալ կը մնար.

Պէստէրեան ուսեալ մարդ՝ ոսկեղէն խօսքերը
կ'ընտրէր, կը գրէր կամ կը փորագրէր, 100ի մօտ
քարեր իր նոր գիւտովը գրուած խրմեան Հարիկին
ծախեց, եակիսի զոսական մատանիի համար, Տէր
Ցովհաննէս Մկրեանի միջոցաւ,

Պէստէրեան ունի բազմաթիւ փորագրութիւններ
թոքերէն տառերով այնքան նուրբ և գեղեցիկ որ
Առւլթան Համիլ Առուեստից շքանշանով պատուած է
զանի քանիցս:

Պէստէրեանի վերջին գործը եղած է զուտ ոսկիի
վրայ զոգ մը թեւնոցի և վեց ոսկի փոքր կոճակներ
շապիկի, ամենուն վրայ Սուլթան Համիլի մանրացոյ-
ցով ըսթեռնկի թուրան փորագրուած:

Փաշայի մը միջոցով անոնք Առւլթանին մատու-

ուեցան, որ կը հրամայէ 400 ոսկի տալ եւ այս
դրամը առնելու համար քանիցս Պալատ գացած եւ
սիկառի ծուլսէն փախչելէ յետոյ վերջապէս օր մը
շատ նեղուելով կ'որոշէ նըլտըզի պարտէզը սպասել
ցուրտին քան ծխախոտի ծուլսէն մասուիլ հիւրա-
նոցին մէջ: Այդ պաշտառութեան հետեւանքով կը
հիւանդանայ եւ կը մեռնի:

Պէստէրեանի բազմաթիւ գործերուն մէջ գլուխ
գործոց պիտի մայ Անգլիոյ Վիկթորիա թագուհին
աղամանդի վրայ փորագրուած պատկերը՝ որ Պուտյ
արուեստահանդէսին մէջ ի տես դրուած է ժա-
մանակին:

Փորագրած է նաև Հ. Պէտոնդ Ալիշանի պատ-
կերը իր Յոթեւեանին առթիւ:

Պէստէրեան իր արհեստը չէ կրցած սորվեցնել
իր որդւոյն իսկ, Հըանտ Պէստէրեանի, արձանագործ
ի Բարեզ, նշանաւոր իր ճիւղին մէջ:

6.

ԳԵՂԱՅԻ ՍԻՄՌ

Գանք վառողապետ Պօղոս Պէյի վանայ գիւ-
ղացի Սիմոն ծաւային: Սիմոն անհասկընալի լիզու
մը ունէր, բառերուն կէսը հազիւ կ'արտաքերէր.
սակայն ինքը իրեն եղած հրահանգները լաւ կը
հասկընար:

Բարեկէն վերադարձին բախտը ժպտեր էր. մեծ
մեծ պարգևելուն կ'ստանար իր համեղ պաղպաւ-
ղակներուն համար:

Պետական անձերու մէջ այնքան մեծ համբաւ
հանեց որ օր մ'ալ Սուլթան Ազիզ կայսեր բարեհաճ
Հրամանովը տօնուրմանի պատի կոչուեցաւ:

Սիմոն լաւ դիրքի մը տիրանալէն ետքը մ'ու-
ցաւ հայրենի գիւղը եւ տունը, մէկ երկու վկանե-
րով յաջուեցաւ ինքզինքը ամոռի նկատել տալ եւ
Պատրիարքարանի հրամանով Պոլեցի աղջկան մը
հետ ամուսնացաւ եւ զաւակներ ալ ունեցաւ:

Իր առաջին կինը տարիներէ ետք լիւլով որ
Սիմոն հարստացեր, ամուսնացեր եւ զաւակներու
ալ տէր եղեր է, թողուց գիւղը եւ յանկարծ օր
մը եկաւ գտնել իր ամուսինը ըսելու համար.

— «Սիմոն, զիս որո՞ւ ճգեցիր եւ նոր կին առիթ»:
— «Ա՛խ, սիրելիս, դուն ալ եկուր, բալցոցին
մէկ ծայրը գուն նստէ, միւս ծայրն ալ ան, մինակ
կուր մ'անէք» կ'ըւլայ պատասխանը:

Սիմոն հարուստ էր. դժգոհացող կամ կուր
յարուցանել ուզող կինը իր ժառանգութենէն զըր-
կելու սպառնալիքով կը տիրապետէր տանը մէջ,
իսկ պալատին մէջ ի՞նչ որ ըսէին՝ էվլը Էմինիմ կ'ըսէր:

Թագաւորներ, վէցիրներ, փաշաներ ու պաշ-
տօնատարներ կը փոխուէին. սակայն Սիմոն չէր
փոխուեք:

Օր մը Խրիսթաքի փաշան՝ Սուլթան Համբաւի
ունկնդրութեան կ'արժանանայ եւ կը մեծարուի
Սիմոնի պաղպաղակովը Յոյն փաշան կ'ըսէ թէ՝ «իմ
տօնուրմանիս լիմինով կաթով խառն պաղպաղակ մը
կը շինէ, այնպէս համեղ, որ ամէնքը կը գմալին»:

Սուլթանը հրաման կ'ընէ էր որ փաշային ըստա-
ծին պէս պաղպաղակ բերուի:

Սիմոն կ'ըսէ թէ՝ «Ճէր Արքայ, Սիմոն կաթին
հետ եթէ խաւնուի, կաթ կը կաթի. կաթի համ
տուող ուրիշ բան մը ըւլալու է»:

Փաշան կ'ըսէ. «Ո՛չ, ես լաւ գիտեմ որ կաթ է»:
Սուլթանը կ'օպառնայ. «Եթէ Սիմոնը չկրնայ
շինել, Զեր տօնուրմանին բերէք, Սիմոնին տեղը
կ'անցընեմ, ութ օրէն բերէ՛ք»:


Սիմոն կայծակնահար եղած էր. Լիմոնը կաթը
իրար կը խառնէր, կաթը կը կաթէր. կաթը կ'եփէր
եւ ուրիշ ինչ փորձեր որ կ'ընէր, անօգուտ կ'ըլլար.
Նորէն կաթը կը կաթէր. օրերը կ'անցնէին. ութ օ-
րէն փաշան կրկին պիտի գար եւ տօնուրմանին ալ
հետը պիտի բերէր:

Սիմոնի ինեղ աշկերտները շինուած ու արուած
պաղպաղակները թափելէն գրեթէ զզուած էին եւ
մէկ օր մսացած էր փաշային գալուն: Սիմոն կ'ըսէր.
Վերջին փորձ մ'ալ ընեմ: Տղաք, Լիմոնը եւ կաթը
դար զատ կէս սառած վիճակի մէջ իրար խառնե-
ցէր ու դարձուցէք, տեսնե՞նք ի՞նչ կ'ըլլայ»:

Սիմոն յաջողած էր եւ լիմոնախառն կաթով
պաղպաղակը գոյութիւն առած:

ԲԱՐՈՅԵԱԿԱՆ

ԵՐԿՏՈՂԵԱԿԱՆԵՐ



Սիմոնի տիրութիւնը ու շուարումը գերչացած,
յաշորդած էր տարօրինակ ուրախութիւն մը:

Վերջին օրը Սիմոն առառուն կանուխ արթնցաւ.
Վազեց ուղղակի երլտցդ, ամենաընտիր կովն իւզա-
լից կաթը քամել տուաւ, կայսերական պարտեզէն
թարժ ընտիր լեմոններ բերել տուաւ եւ իր ուզած
ձեռավ պատրաստեց իր ձեռքարվը լեմոնախառն կա-
թով պաղպաղակը:

Քիչ եռքը Յոյն փաշան իր Յոյն ծառային հետ
եկաւ:

Սուլթանը Հրաման կ'ընէր ուղղուած պաղպա-
ղակը բերել, արդէն Սիմոն արմէն ինչ պատրաստած
էր եւ իր ձաշակով լեցուց ու ինքը անձամբ տա-
րաւ անօրինակ զուարթութեամբ: Սիմոն չը մոռ-
ցաւ իր արհեստակին ալ լեցուն գաւաթ մը զրկել,
որ զարմանքով կը տեսնէր եւ չէր ուզեր հաւատաւ
թէ՝ գաղտնիքը գիտցուած է:

Սուլթան Համիտ պատուանշանով մը պատուեց
Սիմոնը, բայց տարիներ հետքը 1896 ին թշնամու-
թեան մը զոհուեցաւ, որպէս թէ՝ իր ծառաներուն
պատճայ թէ՝ «տեսէ՞ք անգիտական զբահաւոր-
ները ներս կը մտնե՞ն»:

Իեղձ Սիմոն, կը վտարուի երլտըզէն, բայց
յետոյ Սուլթան Համիտ նկատի առնելով անոր
ծերացած վիճակը, հանգստեան թոշակ մը կապել
կը հրամայէ:

Վ.Հ.ՐԱՄ Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

= 116 =

Նոյն խրմուեն սեղծուեցան ամէն մարդիկ նոյն ժիւար,
Եղբայրներ են մենի բախտակից, սիրե՛ն ամենից զիրաւ:
Եղի՛ր ատոյ դոյ չառուրեան, արզահան՛ դ բայց չարին.
Նա մոլորեալ մ'ու նիւանդ մէ, բուժէ՛ թերես զայն
բարին:

Անկեղծ եղիր, հեմարիս մարդ, խօսրդ որիդ արձագանք.
Կեղծող մարդը սին ստուեր մ'է, ո՛չ մարդ, մարդու:
լոկ պատրաստ:

Պատույդ վրայ դոյ գուրզուրա՛ գերդ բանեազին մի
գոհնար,
թէ կորուսես զայն, կրկին ձեռք անցունեն և շա's
զնուար:

Աշխատուրեամբ օր կը կարնի, կեաներ սակայն
կ'երկարի.

Այն ատեն մարդ կ'ազատագրի, երբու անոր է զերի:
Տե՛ս քէ ինչպէս բբնուրեան մ'է կարզով կ'երայ

ամէն բան,
Զըմեռը՝ ձիւն, գարնան՝ ծաղիկ, նունեմն՝ անունին,
միրզի՝ անան:

Ժառանգուրինը մեծազոյն զոր մարդ բողոք իր զալիին,
Ուղիղ մարդու, պարկետս անձի մանու անունն է անզին:

Ռ. Յ. ԹԵՐՄԵՐԵԱՆ

= 117 =



Տ. ԴԱՆԻԵԼ
Ա. ԱՐՔԵՊԻՍԿ.
ՅԱԿՈԲԵԱՆ

Բարի, հեղահամբոյք,
վեհանձն Եկեղեցական
մըն էր Դանիէլ Արքազան,
զօր կորուսինք վերջացող
տարւոյն մէջ։ Անոր հայու¹
հոգին արատ չունէր բը-
նաւ եւ միշտ պատրաստ

Էր ծառայել բոլորանուէր եւ հաւատարմօրէն իր
հօտին, որուն ապագային բարելաւութեան համար
խորին հաւատք մը կը տածէր։ Այդ հաւատքը ան-
սասան մնաց իր մէջ մեք ցեղին ահաւոր ազէտներու
պահուն իսկ եւ իր նայուածքը պայծառ հորիզոն-
ներու յառած մնաց միշտ

Հոգեւոր օրհներգութիւններու եւ անուշաբրյո
խունկներու մէջ սահող իր կեանքը մաքուր՝ պիտի
վայելէ անտարակոյս այսուհետեւ անվախճան
երանու թիւններ։ Ահա իր վարձքն արժանաւոր։

Այս առթիւ սրտագին կը մաղթեմ երկա՞ր
կեանք երաւասլէմի Ս. Յակոբեանց Միաբանութեան՝
որուն կը վերաբերէր Դանիէլ Արքազան, եւ անոր
պատկառելի Պետին։



ՌԱՓԱՅԵԼ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Բարեգործ եւ ազգասէր հայ, մեռաւ անցիալ
տարւոյ Յուլիս 6են ի Բարիզ։

Միլիոններ կտակեց Ազգին, լիաբուռն նուիրեց
մէր պէտքերուն ու կարօտութիւններուն։

Յարգանքով պէտք է խոնարհիլ այս մեծանձն
հանգուցելոյն յիշատակին առջեւ։

ԸՆՏԻՐ Ա Ղ Զ Կ ՈՒ Ն Ք

Գրեց
ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻՍԵԱՆ

Մանկական կեանքի քեղեցիկ դրուագներ,
ապրուած օրերու սրանչելե օրինակներ կը ներ-
կայացուին այս հատորիկն մէջ, սիրուս գրչով
Յարգելի գրագէտ Տիար Միհրան Յովհաննէսեանի,
որ բանաստեղծութեան, բանասիրութեան եւ ման-
կավարժութեան մէջ հետզհետէ նոյն ոգին ցոյց
կուտայ հրատարակելով իրական կեանի նուազներ,
գրական համբաւեր եւ անոնց իրական արձանիիր եւ
բնիք աղջկանց իրական պատմութիւններ:

Ահաւասիկ բարոյացուցիչ ընտիր մատենիկ մը,
արժանաւոր յարգանք Տեղինակին վաղամնուիկ
Քրոջ յիշատակին, միեւնոյն ատեն ախորժով կար-
ռացուելու գործ ամէն համակի մարդոց, մանա-
ւանդ մէր նորահաս սերնդեան համար դին 25 զրէ։

Պահառաման կեդրոնատեղին կ. Պոլիս, Զաքար-
յանը, թիւ 50

ՄԻՄՈՆ ԴԱԲԱՄԱՌԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա.Տ.Մ.Ն.Ա.Բ.Ջ.Բ.

ՏՈԲԹ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԲԵՐԱ, ՔԻՒԶԻՒՔ ԲԱՐՄԱՔ ԳԱԲՈՒ
Ճարտար եւ խղճամիտ սպասարկութիւն

— 120 —

Պ. ՎԱՀՐԱՄ ԿԱՐՄՐՈՒԿԵԱՆ

V. GARMROUGUIAN

14, RUE TAITBOU PARIS (IX)

ՀԵռագրական հասց' ARARAT-PARIS

ՀԵռաւագյ ԵԱԳԵՐ 50-62

Ալեւորական, ճարտարարուեստական եւ կամ
որեւէ գործի համար գիմեցէք վերի հասցէին եւ
գոհ պիտի մասք Տարիներու փորձառութիւն եւ
ուղղամտութիւն Տիար Վ. Կալմառուկեանի գործելա-
կերպին վրայ մեծ հաւատոք կը ներշնչեն իրաւամբ։

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ԵՐԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԽՈՎԱՆԵՐԻ

1. Սփոփանք Ռամկին 1888	20
2. Իրական կեանքի նուագներ 1892 եւ 93	20
3. Քարերկ 1895	5
4. Քննական պատմութիւն ԺԹ. Հայ գպրութեան 1901	100
5. Նոր քերական ֆրանսերեն լեզուի 1922	15
6. Գրական համբաւեան 1909	40
7. Բառարան ֆրանսահայ 1911	125
8. » Հայ-ֆրնս. 1912	—
9. Տեղեկագիր աղդ. Կալուածոց Տիվեկի 1910	80
10. Զինոք Գլակ հանդէպ արդիական քննադատութեան 1912	60
11. Ակզիւսնք. Քաղ. Տնտես. 1911	25
12. Հայ-ֆրնս. զրուցատրութեւն	30
13. Անգլերէն »	20
14. Բնտիր աղջկունք	ՀՀ Ազգային գրադարան



NL0148380

13448

ԳՐԱՏՈՒՆ
ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱԶԵԱՆ
50, Չակմակդյան, Աղբիւրին մօս, 50
Կ. ՊՈԼԻՊ



LIBRAIRIE
SIMON CAPAMADJIAN
50, Tchakmakdjilar, près de la Fontaine
CONSTANTINOPLE

